

ԲԱԹԱՆՈՐԴԱԳԻՆ

Պուլկարիոյ համար

Տարեկան ֆրք. 10


Վեցամսեայ " 5

Արտասահման

Տարեկան ֆրք. 12

Վեցամսեայ " 6

ԿԼԵՆԻԿ

Գրութիւնք եւ չին
տրուիր:

Հասցե

DIRAN PAPAZIAN

RUE DRAGOMAN

K. STEPAN

BULGARIE) VARNA

ՇԱԲԱԹԱՅԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱՒԵՇՏԱԿԱՆ

Երէ կ'ուզէ՛ք «Հայելի»ին մէջ աղոտ երեւնալ,

Պարտիք սիրուն եւ ազնիւ դէմք մը ունենալ:

ԱԶԳԱՅԻՆ



Բալուէն գրուած թղթակցութեան մը նայելով, Բալուցի կարգ մը լքուած հայ կիներ, գրեթէ ամեն շաբաթ օրերը բօսան կը հասնի, խմբովին Առաջնորդարան գիւմելով կուլան ու կ'ողբան եղեր թէ, մինչեւ ե՛րբ զուրկ պիտի մընան իրենց ամուսիններէն, որոնք 10—15 տարիէ ի վեր օտար աստղերու տակ բնակելով, իրենց զաւակները ու կիները զրկած են բարոյական, նիւթական ու ֆիզիքական միջիթարութիւններէ: Թըղթակիցը վախ կը յայտնէ որ, գուցէ մօտ ժամանակներս հրապարակաւ պիտի լսուի թէ Բալուցի հէգ Մարիամը, խեղճ Ալթունը, տարաբաղդ Խաչատուրը և անոնց վիճակակից կիներ ամուսնացած են օտար պսակով եւ կամ վերջ տուած են կեանքերնուն:

Սոյն տողերը Բալուցի այդ կարգին պատկանող ազգայնոց ուշադրութեանը կը յանձնենք:

Իզմիրէն կը գրեն թէ, վիճակին նորընտիր առաջնորդ Տ. Մելքիսեդէկ սրբազան առաջարկել է տեղացի հա-

րուստ ազգայիններուն որ հարիւրին 3 տոկոսով մէյ մէկ գումար փոխ տան ազգային պարտքին հարիւրին 6 տոկոսը 3ի իջեցնելու համար: Ազգին նուէ՛ր պիտի չտային, այլ պարզապէս ուրիշ պարտատէրերու տեղ իրենք պիտի անցնէին: Իզմիրի հայ ջոջերէն շատեր առաջնորդին այս ազգօգուտ առաջարկին ալ իրենց բարի սովորութեամբը մերժեր են: Կեցցե՛ն . . .

Կալկաթայէն Արմէնիայի զրկուած թղթակցութենէ մը կը տեղեկանանք թէ, Հնդկաշնակ հայոց մէջ փափագողներ կան եղեր հոն հայերէն լրագիր մը հրատարակելու:

Կարժէ որ հայ լրագրութեան առաջին հայրենիքը եղող Հնդկաստան ա՛լ ունենայ իր ներկայացուցիչը Հայ մամուլին մէջ:

Հրատարակուեցաւ Տիար Կ. Բառմաշեանի ԲԱՆԱՍԷՐԻՆ Ա. հատորի Բ. գիրքն ալ, առաջինէն աւելի ճոխ և հետաքրքրական պարունակութեամբ: Սոյն օգտաշատ Հանդէսին աշխատակցող օ-

տարազգի արևելագիտաց թիւը հետզհետէ աւելնալու վրայ է . ասիկա ապացոյց մըն է որ օտարազգի գիտուններն ալ գահատած են ԲԱՆԱՍԻՐԻ կարեւորութիւնը . ԲԱՍԻՐԻ ջերմապէսկը յանձնարարենք մեր դրասէրներուն որ ժամ առաջ բաժանորդ գրուին , վասն զի քիչ քանակութեամբ տպուելուն պատճառաւ , հրատարակութիւնը ամբողջանալէ ետքը դժուարին պիտի ըլլայ զայն գտնել :

ԱՅՍՕՐՈՒԱՆ ԹՂԹԱՔԵՐ

Սոյ խնդիրը

Խառն ժողովը , իր չորեքշաբթի օրուան նիստին մէջ Դատական և Կրօնական գործոց նախարարութեան մէկ պաշտօնական տեղեկագրէն իմացաւ թէ՛ կայս . իրատէ մը կ'արտօնէ որ Սոյ կաթողիկոսական ընտրութեան համար վաղուց ի վեր ինչ գործողութիւն որ կը կատարուէր՝ միեւնոյն եղանակաւ կատարուի : (Որ ըսել է ըստ Սահմանադրութեան) :

Ժողովը հեռագիր մը ուղղելով Սիս , կաթ . տեղապահ Կիրակոս եպիսկոպոսին հաղորդեց կայս . այս որոշումը : Որոշեց նաեւ հեռագրել Երուսաղէմ , լուսարարապետ Սահակ եպիսկոպոս Խապայեանի , որ իրեն յանձնուած է ընտրական գործողութեանց հսկելու պաշտօնը :

— Էտրնէի մէջ յուլիս 18ին կատարուեր է շերամաբուծական մրցման մէջ շահողներու մրցանակի բաշխումը : Ինը խոշորացոյց և 105 ոսկիի գումար մը բաժուեր է մրցման մէջ շահող 16 անձանց , որոնց 12ը հայ , 2ը յոյն և 2ը թուրք են :

— Ռոտոսթոյի Որբախնամ Թանձնաժողովը նորէն 25 օսմ . ոսկի զրկեր է Պատրիարքարան , Արաբկիրի որբանոցին յատկացուելու համար :

Անցեալ կիրակի օրը տեղւոյս Ս . Ե . կեղեցւոյն մէջ հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ ի յիշատակ ողբացեալ Օր . Քաթէրին Ֆրայզէրի . եկեղեցին

լի էր հաւատացեալներու բաղմութեամբ , Անդ . հիւպատոսն ալ ներկայ էր :

Յաւօք սրտի կը ծանուցտենք թէ երբեմն Կասակի և Տաւրուի խմբագիր համակրելին Տիար Յարութիւն Չաքըրեան , որ վերջերս Պուքրէշի հիւանդանոցը դացած էր դարմանուելու համար , Յուլիս 26 երկուշաբթի օրը մեռեր է :

Մանրամասնութիւնք առ այժմ կը պակսին :

ՏԵՂԱԿԱՆ ԿԵԱՆՔԷ



ԱՆՏՈՆ ԱՂԱ

Տարիները անցած են . մեր նախկին միւսիւ Անտոնիկը հիմա եղած է Անտոն աղա , շուրջ 45 տարեկան : Նա հիմա ուրիշին բով ծառայ չէ , այլ ինքն իր գլխուն խանութի տէր է . ունի մի բանի ծառաներ ալ , որոնց կը հրամայէ խիստ դեմքով : Այ՛ , անոր , որ պաշտօնին մէջ քիչ մը փութկոտութիւն չի ցուցնէ , անմիջապէս կ'արտաքսուի դռնէն դուրս :

Անտոն աղան ամուսնացած է եւ ունի մէկ բանի զաւակներ , որոնց մեծը հազիւ 10 տարեկան կայ : Անտոն աղան տանը մէջ ալ միեւնոյն խիստ դեմքը ունի . իր համոզմամբ , զաւակները կրթած ըլլալու , երես տուած չըլլալու համար անոնց հետ ամենեւին լըջութեամբ չի խօսիր . միշտ յանգիմանութիւն եւ երբեմն ալ ծեծ : Ահա այս պատճառաւ տղայք ալ վերջին աստիճան կը վախնան իրենց հօրմէն . « Հայրդ կուգայոք ըսելը բաւական է այդ խեղճերը ծակէ ծակ փախցունելու : Անտոն աղա ամեն իրիկուն խանութէն ելնելէ վերջը սովորութիւն ունի մէկ երկու շիշ օղի տնկելու , առանց օղիի չի կրնար ըլլար . կըսէ թէ առանց անոր չի կրնար խօսիլ . ու եթէ բերանը բանայ , յաճախ նախատալից բառեր դուրս կուտայ : Շատ իրիկուն մինչեւ կէս գիշեր գինետունը կը մնայ , անդին իւր կինը ճարահատեալ եթէ ուզէ

ճաշել ու պառկել, սոսկալի նախատինքներու տեղատարափի մը պիտի հանգարի. Անտոն աղա կ'սպառնայ թէ պիտի արտաքսէ զինքը տունէն, եթէ կրկնէ իր այդ անհնազանդ վարմունքը: Խեղճ կինը գլուխը կը ծռէ, «այս է եղեր ճակատագիրս» ըսելով: Անտոն աղան յոնքերը պոստած սեղան կը նստի, կը ճաշէ ու զբաղեալ մարդու մը պէս առանց բառ մը արտասանելու, կերթայ կը պառկի: Իր նայուածքը արհամարող է. բնաւ մէկու մը չօգնելու, շատ անգամ՝ աղբատի մը հինգ լարայ չուզեր տալ. «գնա՛, կըսէ, ես ալ կուզեմ առանց աշխատութեան շահիլ, բայց տուող չիկայ»: Ազգային գործերու համար եթէ ստակ ուզեն, Անտոն աղան ամենեւին այն կողմերը չըլլար, չի մասնակցիր. խօսքով միայն ազգասէր է. «ազգային գործը ինչէ եղեր, կըսէ. աղբա՛ր, մարդուս բոլոր շահածին աչք կը տնկեն»:

Ահա այսպէս է մեր Անտոն աղային բնավարութիւնը, որոյ նմանողները գծադրաբար սակաւթիւ չեն տակաւին:

ՖԷՊԻՒՍ

Ծ Ի Ծ Ա Ղ

ՊՈԼՍԱԿԱՆ ՏԻՊԱՐՆԵՐ

ԻՍՍԿԻՏԱՐՑԻ ԿԻՆԸ

Իրիշերը հաւերուն հետ կը պառկի և առտուն աքաղաղներուն հետ կարթննայ. հակառակը վտանգի տակ պիտի դնէր իր պարկեշտութիւնը: Ծննդեամբ թըխադէմ կըլլայ, բայց արհեստին շնորհիւ շուշանաթոյր է Իսկիւտարցի կինը:

Աղջիկ եղած ատենը խրեախ աշխարհաբար կը խօսի, կարգուելուն պէս կը մոռնայ: Ս. Խաչ եկեղեցին կերթայ կանոնաւորապէս, տեսնելու համար թէ Գատար—Գիւղէն եկողները ինչ հագած են:

Եթէ տուները պատուհաններ չունենային, Իսկիւտարցի կինը երբեք պիտի մեռնէր: Լոնտոն, Բարիզ, Պէրլին մէյմէկ օպսերվատորառ ունին, Իսկիւտարի ամեն մէկ տունը մէյմէկ գիտարաններ են: Իրենց համար Իսկիւտար գիւղերուն ամենէն լուսաւորեալը և ամենէն արխոքօքսաթիֆն է, որովհետեւ . . . Տօքթ. Էսմէրեան հոն կը բնակի:

Նատ կոկիկ են իրենց բարոյականին մէջ, բայց շատ թափթփած իրենց արդուզարդին մէջ: Իսկիւտարցի կինը իր էրկանը վրայ խօսելով, «Գրիգորիկ աղան» կըսէ, ինչպէս Գատըգիւղցին կըսէ «Ամուսինս», Բերացին՝ «Գրիգորը», Թօրխաբուցին՝ «Չօճուխներուն հարը», Եէնգիւղցին՝ «Էրիկս» և Օրթագիւղցին՝ «Իմինս»:

Եթէ Իսկիւտարի կիներուն գլխարկները սեղանի մը վրայ շարես, առջիդ կունենան գլխարկի րեթօզքեթիքիլ ցուցահանդէս մը:

Ձեռնոցին վրայէն մատնի կը հագնի և փէշին տակէն ֆօշաւըգ միսօ: Շապիկները ձեռքով շինուած մատի մը լայնութեամբ քրօշէով կը սկսին և շապիկին ընկերները մատ մը քրօշէով կը վերջանան: Բաղնիք կերթայ . . . զբօսնելու համար, այն ալ տարին 1-2 անգամ:

Քալուածքնուն մէջ յուսահատեցուցիչ չգիտեմ ինչ մը կայ, որ քեզ զղջալ կուտայ հայ ծնած ըլլալուդ:

Իսկիւտար տուն—փեսայ երթալը անձնասպանութեան մէկ տեսակն է:

Նշանաւոր կերպով սկամպիլ կը խաղան, շնորհքով տանս կընեն, բայց բիւնօ չալել մի տաք, անպատճառ Լաւ Բռնիկն ինչ փիւռով կը սկսին և «Ալտըտա պիր եաղմուր»ով կը վերջացնեն:

Իսկիւտարցի կինը ուխտած է էրկանէն ետքը մեռնիլ, միմիայն ամուսնոյն յուշարկաւորութեան քանի հոգի եկած ըլլալը համրելու գոհացումը ունենալու համար:

Դատամէս

ՎԱՐԴԱՎԱՌԻ ԱՌԹԻԻ

Վառնա 26 Յուլիս

Յարգելի Պ. Բոժոժիկ

Ամեն մարդ տէրտէրին խոստովանանք կըլլայ, ես ալ բեզի պիտի ըլլամ, որովհետեւ վստահ եմ գաղտնապահութեանդ վրայ, մանաւանդ որ շատ ալ կը սիրեմ բեզ... մինչեւ հիմա ինծի բան մը ըսած չըլլալուդ համար. կարծեմ դուն ալ գոհ ես ինձմէ եւ պիտի ընդունիս սիրոյս հաւաստիքը: Ուրեմն պատմեմ պատմելիքս, ըսեմ ըսելիքս, որմէ կարծեմ շատ գոհ պիտի մնաս, մանաւանդ իմ վարքէս ու բարքէս, որուն վրայ գիտեմ որ չես կասկածիր:

Կիրակի Վարդափառ էր. առտուն մութն ու լուսուն ելայ. պոչազգեստս՝ այսինքն պօմ-
ժողոջ հոգայ, երես շտկեցի շտկոտեցի, պեխերս ոլորեցի և ծայրերը գէպի վեր տընկեցի, աշարձոս կօշիկներս հագայ ու տունէն դուրս թռայ. բնական էր որ զգեստներուս հետ խելքս ու քալուածքս ալ փոխած էի, և այնպէս գեղեցիկ կը քալէի, որ հանդիպողին ուշադրութիւնը կը գրաւէի անմիջապէս, մանաւանդ օրիորդներունը: Մէկ ժամ այս ու այն կողմ դեգերումէ և ինքզինքս ներկայացնելէ յետոյ հասայ եկեղեցի. ուր արդէն պատարագը սկսելու վրայ էին. հո՞ծ բաղմուն-
թիւն մը խոնուած էր. մտայ անմիջապէս ներս և բաւական դժուարութենէ ետքը, վերջապէս կարողացայ տեղս հասնիլ և իմ արժանավայել դիրքս գրաւել. աչքս ալ չորս կողմըս էր, զի կուզէի իմանալ իմ ներկայութեանս տպաւորութիւնը: Ո՛հ ի՞նչ լաւ պիտի ըլլար եթէ մարդիկ մէկ աչք մ'ալ գլխուն ետեւի կողմէն ունենային. հո՞ն ալ անցած դարձածը իմանալու համար. ափսոս որ շատ անկատար էակներ ենք և չենք կրնար մեր ամեն ուզածը ընելու: Միայն սա չափ կրնամ ըսել որ շարունակ փսփսեքներ կը լսէի եւ տեւէս, մանաւանդ կանացի ձայներ, որոնք անպատճառ ինձ համար (?) ըլլալու էին:

Այդ օրուան պատարագը եռաձայն է ըսին, աւա՛ղ որ ես բան մը չհասկցայ, այդ ծիւղին մէջ ունեցած բացարձակ տգիտութեանս պատ-
ճառաւ: Շատ մը հաստ ձայներ եւ բարակ ձայներ իրար խառնուած էին, որուն կըսէին եւ
ռաճայն: Եկող կիրակի ալ թերեւս ունենանք վառ մայն. և յորջորդաբար. Աճ. Բճ. Գճ. Դճ. Եճ. . . ձայն. ձայն. . . մինչև որ ձայ-
ներնիս կտրի: Ես չհասկցայ կըսեմ, որովհե-
տեւ այդ ձայնաւորութեան մէջ միայն խափմը-
նացի. քովիններս ալ իրարու երես կը նա-
յէին, չեմ գիտեր ինչո՞ւ համար: Շիտակը ըսելով, ես չեմ կրնար տառնկ խառնուի-
շիկներու խառնուել, մանաւանդ որ Պ հրա-
մանատարն ալ բարկացող մէկուն կը նմա-
ներ, բերանը ա՛յնքան կը բանար, որ կը վախնայի թէ չելլայ. . . ձայնաւորներէն մէ-
կը կըլլէ: Կեցած տեղն ալ ե՛նչ ճէյրմէնի-
ին պէս Փըրըլ Փըրըլ կը դառնար. երբ ա-
սոր պատճառը հարցուցի, պատասխանեցին որ
առանց անոր դառնալներուն եռաձայնը չպի-
տի կրնար սպասուած ձայնը հանել. ու ար-
դար խօսելու համար մարդը մինչև վերջը շատ
յոգնեցաւ:

Չեր պատուէրին համաձայն, եկեղեցիին
աւարտումէն ետքը, բնաւ չի կեցայ, չի սը-
լըքտացի բակին մէջը. միայն բանի մը վայր-
կեան մէկ երկու բարեկամի հետ դրանք ան-
կիւնը խօսակցեցանք, մինչև որ նազելաճեմ
օրիորդները ու տիկինները անցան, ու մենք
ալ միւր գործին գացինք, ու արդէն կը վայ-
լէ՞ մնալ, ի՞նչ անքաղաքափարութիւն, մեզի
պէս բարեկիրթ երիտասարդներու համար:

Պէտք է խոստովանիմ որ ես այդ օրը
միայն եկեղեցի չգացի, իրիկունս գէմ ալ
հաճի Բանաթօ վազեցի, որ երկրորդ ուխտա-
տեղի մը ըսել է եկեղեցիէն վերջը. քանի
որ թէ եկեղեցական և թէ աշխարհական ա-
մենքն ալ հո՞ն կերթան ամեն օր: Չբարկա-
նաք երկրորդ ուխտատեղի ըսելուս, կ'ուզէք
նէ դուք առաջինի վերածեցէք. Ա՛հ, ի՞նչ
մեղքս պահեմ, սա ծովեզերքի պարտեզը շատ
սիրած եմ. ծառերը, ծաղիկները, որոյ ապը-

տոյտ ճամբաները, մանաւանդ մութ ատեն
մանաւոր հրապոյր մը կը ստանայ պարտե-
զի դռնէն ներս շեշտակի դէպի վար . . .
ծովը իջնուլ ճամբան, որուն աջ ու ձախ կող-
մերը կը գտնուին ծովաբաղնիքները . ու հոն
կեցած, ծովուն ու բաղնիքներուն հանդէպ .
երբ ալիքները մերկ մարմինները կը համու-
րեն և հովերը բազմազան շրջագոյններու
ու փետրաւոր գլխարկներու հետ կը կռուին,
մարդ ինքնին . մէկէնիմէկ . առաք հոգիւն կըն-
դունի, ու . . . փիլիսոփայ, բանաստեղծ կը
կտրի կը յօրինէ ու կը գրէ սիրոյ ճառեր,
հրեշտակային ոտանաւորներ, որոնք վերջա-
պէս բան մըն են սա իրար շախատելու եւ
իրարու հայոյելու ժամանակին մէջ, այնպէս
չէ՞ Պ. Բոթոթիկ: Իրաւունք չունինք ուրեմն
դուն ալ ես ալ միասին սա Հաճի Բանաբոն
ու պարտէզը սիրելու, ուր միայն ծաղիկը ծո-
վը ու սէրը կը տիրապետեն եւ ո՛չ հայհո-
յութիւնը:

Պարտէզի ձախակողմեան բազուկը, իր
օձապտոյտ ճամբաներով քսց էր այդ օրը,
նուագահանդէս ու վիճակահանութիւն կար,
բարենպաստակ ընկերութեան մը համար: Ու
պարտաւորեցանք մաքուր օդ ծծելու շրջա-
գայութիւնը սահմանափակել Հաճի Բանա-
բոն ուղիղ գծին վրայ . երթալով բազմութիւ-
նը կաւելնար ու մենք ալ իրարու կը մօտե-
նայինք. ճամբանիս նեղ կուգար և իրար կը
քսուէինք, առաջապահները ըստ կամս կանգ
կառնէին, և մենք ալ կանգ կառնէինք և ա-
ռիթէն օգտուելով շրջականերէն բուրած ան-
մահական անուշահոտութիւնները շնչել եւ
կամ գլխանոցներու վարդերը հոտոտելու փոր-
ձեր կընէինք: Ա՛լ քաղաքավարական ձեւերը
վերցած եւ շիւտօսեմ մարտէզին
ծակերը մտած էին. գրեթէ թեւ թեւ կը բա-
լէինք ու պահ մը երիտասարդներ և օրիորդ-
ներ իրար խառնուած էինք. արդեօք երազ
մ'էր Պ. Բոթոթիկ. հոն. ըլլալու և տեսնե-
լու էիք օդին գեղեցկութիւնը եւ բազմու-
թեան կայտառութիւնը. հա՛ սա ալ չմոռնամ
ըսելու որ դեղնած տիկին մը կամ օրիորդ
մը բնաւ չտեսայ այդ օրը, ամենքն ալ կար-

միր, խնձորի պէս կարմիր էին . . . : Կերե-
ւայ որ կամ օդին գեղեցկութիւնը ազդած էր
ամենուն գէմբերուն վրայ, եւ կամ երեսնին
բան մը քսած էին: Շիտակը չեմ կրնար մեղ-
քի տակ մտնալ եւ որոշ բան մը ըսել: Ամե-
նուն աչքն ալ կը փայլէր, կը մեծնար կը
պզտիկնար, եւ սիրուն, շատ սիրուն ժպիտներ
կը փոխանակուէին աջ ու ձախ: Նոյն իսկ օ-
րիորդ մըն ալ ինձ նայեցաւ ու խնդաց, երբ
ես վիզս վեր տնկած, պոչազգեստս շտկելով,
կանոնաւոր ու չափական քայլերով կը յառա-
ջանայի. ա՛խ որքան երջանիկ էի այդ վայր-
կենին. . . . հետեւեցայ, բայց բազմութեան
մէջ կորսնցուցի վիշքը ու հիմայ կողքամ' իմ
դժբաղդութիւնս: Ո՛հ, ո՞րքան, դժխեմ է
բալդը . . . :

Բարկութենէս մտայ «կրօզտի» սրճա-
րանը ուր լարախաղացները իրենց հրաշալի
խաղերը սկսած էին, շուտ հասնողները գը-
րաւած էին սեղանները, իսկ ուշ հասնողներն
ալ ոտքի վրայ մնալ դատապարտուած էին,
ճիշտ յիմար կուսանաց պէս. ափսոս որ ձեռ-
քս լապտեր մը չունէի. թերեւս այն ատեն
տեղ մը գտնէի: Լարախաղացները կոգեւոր-
էին զմեզ եւ երթալով բազմութիւնը կը խը-
տանար. մենք ստիպուեցանք իրարու մօտե-
նալ դարձեալ. եւ իրարու կոնակի վրայ բար-
ձրանալու նման բան մը ընել. մէկը լաւ տես-
նելու համար կը մօտենար, միւսը իր հա-
սակի կարծութիւնը պատճառ կը բռնէր. ու-
րիշ մը իր հետաքրքրութիւնը, եւ կը սեխ-
մըռտէինք զիրար. դժուարին փորձերու եւ
լարի դարձուածքներու միջոցին մեր վախէն
զիրար գրկելու փորձեր ալ պիտի ընէինք.
ինչպէս որ կը պատահի մեծ հրդեհներու եւ
կամ ուրիշ վտանգներու ժամանակ, եթէ մեր
վախը վայրկենական չըլլար եւ անմիջապէս
ծափահարութեան չի փոխուէր: Արիւն բըր-
ահնք կը թափէինք. բայց որո՞ւ հոգ, ան ի՞նչ
տեսարան, ան ի՞նչ տեսարան. . . :

Բնաւ մի՛ հարցներ հաճի Բանաբոն,
բոլորովին նար կերպարանք մը առած էր այն
օրը. Շէնան բարձրացած, իսկ պարտէզի սե-
զանները ցածցած էին. իմ երկար վիզս, բիթս,

ու նոյն իսկ հաստ գաւազանս, որուն կրթնած մէկ երկու մատ աւելի կը բարձրանայի, անկարող եղան պէտք եղածը տեսնելու կամ հասկնալու, և յետոյ ամեն բան խելքով գրտայ: Աստուածներ ու աստուածուհիներ կերգէին ու կը պարէին շէնային վրայ, կարճազգեստ ու կրծաբաց լարուած էին մեր բոլորին ուշադրութիւնը, շունչերը իսկ դադրած և ամեն աչքեր յառաջ գէպի պարուհիները, որոնց մէն մի բայլին երկնային տեսարաններ կը պարզուէին մեզ, դժօխարը նակներուս համար:


Պղտիկ միջագէպով մը յօգուածս ամբողջացնեմ:

Ճամբուն երկայնքին պտտած ատեննիս անսովոր ազմուկ մը մեր ուշադրութիւնը գէպի նշանառութեան սեղանը հրաւիրեց, սեղան մը, որուն շուրջը հաւաքուած էր խառն խիսուռն բազմութիւն մը. ամենքը իրենց կարգին 10 փարայ տալով բաղդերնին կը փորձէին դարձող բոլորակի մը վրայ նշանակուած 1էն մինչև 100 թիւերը զարնելու. որոյ փոխարէն կը ստանային շաքարահատեր՝ զարնուած թիւին քանակութեամբը: Ըսին թէ պարոն մը իւր թիւը ունեցած ընկերութիւն առաջարկութեամբը տասնոց մը տալով նշանառութեան մասնակցեր ու յաջողելով 100րդ թիւին զարնել, 100 շաքարահատեր առած է. այն միջոցին ականատեսներէն մին իր բովիւնին ըսեր է թէ, «աւա՛ղ, ես չի կրցայ սա հարիւրին զարնել». տոյս խօսքը թիւերի մացութեան տեղի տալով, պարգեւընկալ պարոնին դիւրազգածութիւնը կը գրգռէ, որ կըսկսի ըսպառնալիքներ տեղալ անոր. կարծելով թէ նա գինքը ակնարկած եւ հարիւրը տարբեր կերպով մեկնած է. թէեւ նոյն անձը շատ կաշխատի համոզել թէ երբեք այդ մտքով չէր ըսած, բայց շաքարընկալ պարոնը փոխանակ համոզուելու՝ հետզհետէ հնգկահաւի ձեւեր առած, կը շարունակէ իր գոռողաբանութիւնները, որոնց վերջ մը տալու համար ներկայ գտնուող մի բանի պարոններ ալ կը ստիպուին միևնոյն ոճով և բիշ մ'ալ աւելի կծու կերպով պատասխանել. ասոր վրայ պարոնը

սմբած ու թեւերը վար առած՝ կաներեւութանայ բազմութեան մէջ, տեղի տալով ներկաներու երկարատեւ ծիծաղին:

Հնգկահաւին ուռոյցը կէս վայրկեան կը տուէ:

ՓԱՅԼԱԿ



Երկու մտերիմներ.

— Խեր ըլլայ միւսիւ կուռնիկ, ո՛ւր կը վաղես.

— Ուռնուգի թռչնին պիտի հասնիմ:

— Տակաւին շատ ժամանակ կայ եղբայր, քիչ մը կամաց քալէ:

— Եղբայր, մէկը գիտես, մէկը չի տես, դերձակին պարտք ունիմ, ետեւս կուգայ կոր, ես ալ վաղելով կերթամ որ ինծի չի հասնի:



Տան մը մէջ.

Կինը — Էրիկ մարդիկ կուզեն որ ծենելիք զաւակը մանչ ըլլայ. ինչպէս հայրիկա ալ շատ հեղ ինծի կըսէր թէ, «ա՛ղջիկ, աւելի ուրախ պիտի ըլլայի, եթէ մանչ ըլլայիր»:

Էրիկը — Ախ, կնիկ, մինակ հայրդ չէ, ես ալ ուրախ պիտի ըլլայի.

ԿԵԼ ԳԱՆԹԱՐԱ՝...



(Շարունակութիւն)

Պուրկաղ

Երբ Պուրկաղի կայարանը հասայ, դիւմաւորութեայ կշռուելու վախէն կասկած ունեցող կարգ մը քէշի թիրիզիներ ույմազ շալվարաւոր, տիզլիկաւոր, բոթուռաւոր, բանթօլոնաւոր և գալբագաւոր

պարոններէ, որոնք սկսան փաղաքշել զիս. ումանք խանթարս շալկեցին, ումանք սանդարամետական վերարկուս առին, իրենցմէ մէկն ալ կրնակը ներկայացուց ինձ, ըսելով. «պարոն Բոթոթիկ, հոս կառք չի կայ, հետեւաբար հաճեցէք կրնակս նստիլ որ զձեզ տանինք մեր կեդրոնատեղին չամ օղլուին ինչպէս: Թէն կը վայելէ որ տուփուլ զուռնայով առաջնորդէինք, բայց որովհետեւ այս միջոցիս զայն հանգանակութեան զրկած ենք, չպիտի կրնանք մեր այս փափազը իրագործել. այս մասին ձեր ներուղութիւնը խնդրելով կը յուսանք թէ մեր այս հիւրընկալութեանը փոխարէն դուք ալ զանց պիտի առնէք զմեզ խանթարլամիշ ընելէ:

— Հէ՛, ի՞նչ ըսիք. ի՞նչ... ադ բամպակը ականջնուդ հանեցէք. եւ հոս կըշռելու եկայ, զանց ընելու չեկայ:

— Է՛հ, եթէ անուշութեամբ չի համակերպիք, մենք ալ կերթանք թաղապետութեան կը մատնենք թէ խանթարըդ պակաս կը կշռէ:

— Գիտեմ թէ այդ բանը կընէք. գիտեմ թէ վարժուած էք ան աս մըրոտելու. բայց ճշմարտութիւն ուշ կամ կանուխ կը յաղթանակէ ամօթահար ձգելով ամշնալու երես ունեցողները:

Այս միջոցին հասած էինք վերոյիշեալ սրճարանին հրապարակը, և ինչպէս որ ըսինք, իմ Պուրկաղ հասնիլս արդէն տարածայնուած ըլլալով, վազող վազողի ելեր էին. եկեղեցիին քահանան անգամ աճելէ թէրթիպ ակնոցը քիթը անցուցած, ետէ՛—եքէրէք եկաւ մեզ դուռ:

— Օրհնեա՛ տէր հայր.

— Համմէ՛...

— Խանթար հրամմէ՛:

— Ի՞նչպէս էք Պ. Բոթոթիկ.

— Աղէկ եմ:

— Դուք ալ չէ՞ք հարցներ մեր որպիսութիւնը:

— Ձէ՛. խանթարը պիտի հարցնէ ձեր որպիսութիւնը. հրամմեցէք, նստեցէք:

— Համմէ՛...

— Ըսինք ա՛, խանթար հրամմէ՛:

— Բայց ի՞նչ ըրած ունիմ ես որ...

— Կը հարցնես տէր պապա. դուն՝

«կէլէն աղամ, կիտէն էֆէնտիմ» ի հետեւա՛ քաղաքականութեամբ ձայն չի բարձրացուցիր Պուրկաղի մէջ պատահած ազգամշտս դէպքերու առթիւ. գէթ Պուրկաղիոյ այցելու հովիւ Գեր. Պաղճեանի չի տեղեկագրեցիր ու զայն չի հրաւիրեցիր խաղաղութիւնը հաստատելու համար, որով մասամբ տեղի տուած եղար չէնքով շնորհքով ընտրուած Թաղ. խորհուրդին տեղ եկեղեցւոյ ու վարժարանի լեզուէ չի հասկցող կարգ մը մարդոց ուղածնուն պէս ճիւղիտ խաղաղուն:

— Ներեցէք Պ. Բոթոթիկ, բէք պօլ պօլ կը ջարդէք կոր ամա, քիթապը իքի թարափը օգու՛մալը. իմ տեղս եթէ ուրիշ մը ըլլար, տարբեր ընթացք մը չպիտի կրնար բռնել, նկատելով որ իր դէմը կը գտնուէին անանկ մարդիկներ, որոնց հետ կատակ չըլլուիր: Հրամանքըդ պատիհա՛վա ծեծ կերած ունիս մի, Պ. Բոթոթիկ:

— Ծեծ մի՛. . . ատունկ բան պատահեցա՛ւ մի ես...

— Պատահելուն մատ մը մնաց: Անանկ մարդիկներ կան դիմացնիս, որոնց անունը լսող կամ հիշեթնին տեսնող մը սայլանկէօզի պէս գլուխը ներս քաշած՝ ֆաթօյները կը կծկտի. խեղճ հաւմե՛ն ի տէրտէր մը ի՞նչ կրնայ ընել:

— Անանկ է նէ սա խանթարին վերայ նստէ որ կշռուիս:

— Բայց, Պ. Բոթոթիկ, մենք հոս աս մարդոց ձեռքով արդէն ամեն օր խանթարլանի՛շ կըլլանք ու կը կշռուինք կոր. . . : Նայէ՛, սանկ նայէ՛, կշռուելիք մարդիկները ահա կուգան, բայց կը վախնամ որ խանթարը չի քաշէ:

— Այդ մասին հոգդ չըլլայ, նեղը մնամ նէ՛ Վէ՛վ չավուշին կըսեմ, կէօմբիւկի պարսկոյ խանթար մը կը շալկէ կը բերէ:

Այս միջոցին, նոր պաշտօնի գլուխ անցած երկու բեռնակիրներ հնհնալով ու տքալով ֆիլէ մը բերին խանթարիս վրայ դրին: «Ատոր պարունակութիւնը ի՞նչ է» ըսելու չի մնաց, ֆիլէն դուրս երկու մարդիկներու գլուխ երեւաց:

(Շարունակելի)

